1178. Եղել է փոքր մատուռի մուտքի ծախակողմում.

Ի թուին ՉՃԱ (1332), ես Չվանշէր շինեցի զխորանս և կանգնեցի զխաչս բարե..., ով խափանէ իմ մեղացս տէր է և դատի յԱստուոյ:

Հրատ. «Արձագանք», 1886, 12, 162, Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, 442:

1179. Եկեղեցու մուտքի բարավորին, 7 տող, վերջին տողի մի մասը վրացերեն, 1986 թ. արձանագրությունը տեղում էր, սակայն միտումնավոր քերված.

Կառուցաւ Սուրբ Սարգիս եկեղեցիս ի հիմանէ
աշխատութեամբ եւ արդեամբք Ղազախու
գաւառի Կօթի գիւղացի Արզուման Խա
չատուրեան Տէր Սահակեանցի, ի յիշատա
կի իւր ծնողաց եւ որդւոց իւրոց,
1838 ...
...

Հրատ. «Արձագանք», 1886, 12, 161, Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, 442:

Ծանոթ. Առաջին հրատարակիչը վերծանել է միայն առաջին 5 տողը (Ս. Կ.):

1180. Գագ լեռան ծերպերի մեջ եղած քարայրներից մեկում կարդացվել է.

... ի թուիս հայոց ՈՕԷ (1208), յիշխանութեան...:

Հրատ. «Արձագանք», 1886, 12, 162, Ս.Կարապետյան, Հյուսիսային Արցախ, 443:

ԲԵՐԴԱՎԱՆ

Երկար ժամանակ կոչվել է Ղալաչա՝ գյուղից հուսիս-արևելք գտնվող ամրոցի (ղալա) պատճառով: Կիսաշրջան բազմաթիվ աշտարակներով բերդն էլ կոչվել է Ղանլիչաքար: Այն եղել է Կյուրիկյանների, և ապա՝ Վահրամյանների պաշտպանական կարևոր կենտրոններից՝ հազար տարի շարունակ:

Ամրոցից հարավ տարածված է ընդարձակ գերեզմանոց՝ չափազանց ինքնատիպ խաչքարերով: Դրանցից մի քանիսի վրա կան եղծված-հողմահարված, դժվարընթեռնելի հիշատակագրություններ:

1181. ԽԱՉՔԱՐ. հմտամշակ, կանգնած միակտոր պատվանդանի վրա, կոտրտված, մաշված, հողմահար, քիվին, 3 տող.

ԱՀՍԲՄԵԽԱ	[ՍԲ Խ]ԱՉՍ ԲԱՐԵԽԱ[ԻՍ]...
ԳՐԻՔՈՒՆ ԷԻԱՍԱ	ԳՐԻՔՈՐԻՆ, ԷԻԱՍԱ
ՓԻՆ ԹՎԱԿԻՆ ՈԿԹ	ՓԻՆ: ԹՎԱԿ[ԱՆ]ԻՆ ՈԿԹ (1220):

Ծանոթ. Վերծանությունը մնում է երկմտելի:

1182. ԽԱՉՔԱՐ. գեղաքանդակ, քիվի տակ երկու կլոր և մեկ սրանկյուն զարդեր, քիվին 2 տող մաշված ու ոչնչացած.



[ԿԱՆԳՆԵՑԱՒ ՍԲ ԽԱ]ՉՍ Ի ԲԱՐ[ԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ]
...ՍԱՐԳՍԻ: ՈՐՔ ԵՐԿԻՐՊԱԳԱՆԵՔ ԱՂԱՒ[ԹՍ ՅԻՇԵՑԷՔ]:

Ծանոթ. Գերեզմանոցի առավել հմտամշակ բուսական ու երկրաչափական զարդերով, հորինվածքի անսովորությամբ խաչքար է, ԺԳ դար:

1183. ԽԱՉՔԱՐ. ընկած գերեզմանոցի հյուսիսային եզրի կիսավեր միանավ եկեղեցու հյուսիսարևելյան խորանում, քիվին կիսաեղծ, 2 տող.



[ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐ]ԵԽՕՍ Է ԱՐ...
... ԹՎԻ[Ն] ՌՆԽ (1691):

Ծանոթ. Խաչքարի (1,12x0,13x0,13) քիվի տակ, եզրերում, մարդկանց հարթաքանդակներ են, կողերին՝ երկրաչափական հյուսքազարդեր:

ԱՇՈՑՔԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Զբաղեցնում է Լոռվա սարահարթի հյուսիսարևմտյան հատվածը՝ Թուրքիայի և Վրաստանի սահմանակցությամբ: Եղել է Մեծ Հայքի Գուգարաց աշխարհի Տաշիր-Աշոցք գավառների կազմում: 1937 թ. մինչև վերջերս կոչվում էր Կալինինոյի շրջան:

Հարուստ է վաղ բրոնզի և երկաթի դարաշրջանների բնակատեղիներով, ամրոցներով, դամբարանադաշտերով: Պահպանվում են նաև վաղ միջնադարյան քրիստոնեական ճարտարապետության կիսավեր ու կանգուն հուշարձաններ (Մեծավանք, Խրբեքի վանք, Չախմախի միանավ սրահ, Դարբանդավանք), որոնց վրա, ցավոք, արձանագրություններ չկան:

Շրջանում հոգևոր կրթամշակութային կենտրոններ չեն ստեղծվել ոչ միայն ամառանոցային-արոտավայրային տարածք լինելու, այլ նաև թուրքական, պարսկական ներխուժումներով, բնակչության տեղահանություններով պարտադրվող անբարենպաստ պայմանների պատճառով: Իսկ նոր եկողները զորու չէին լուրջ ձեռնարկումների և ԺԹ դ. սկզբներին Ալաշկերտից գաղթածները մի կերպ ցածրարվեստ ծխական եկեղեցիներ էին կառուցում: Մի շարք լքված գյուղերում էլ վերաբնակվում էին թուրքեր, քրդեր, հույներ, մալականներ, որոնք ոչ միայն հոգևոր շենքերի կարիք չունեին, այլ նաև ջանադրաբար ոչնչացնում էին հնից մնացածները:

XIX դ. եկեղեցիների շինարարական բնույթի վկայագրերը չեն մտել պրակի մեջ: